

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>6.12 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>ERROR! BOOKMARK NOT DEFINED.</b>
6.12.1 Ներհոսք .....	<b>Error! Bookmark not defined.</b>
6.12.2 Սոցիալական խնդիրներ.....	<b>Error! Bookmark not defined.</b>
6.12.3 Մոնիտորինգ և աուդիտ .....	<b>Error! Bookmark not defined.</b>
6.12.4 Եզրակացություն .....	<b>Error! Bookmark not defined.</b>

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 6.12.1 Ներքին միզրանտների տիպաբանությունը .....	7
Աղյուսակ 6.12.2 Ազդեցության գնահատում, ներհոսքի ազդեցություններ .....	21
Աղյուսակ 6.12.3. Ազդեցության գնահատում, սոցիալական խնդիրներ.....	28
Աղյուսակ 6.12.4.Ազդեցության ամփոփում – ժողովրդագրություն .....	28
Աղյուսակ 6.12.5. Մեղմացման միջոցառումների ամփոփման աղյուսակ .....	30

Error! No text of specified style in document. **Ժողովրդագրություն**

Սոցիալ-տնտեսական ազդեցության տակ գտնվող տարածքը սահմանվել է երեք մակարդակում: Ազդեցության տակ գտնվող պետական մակարդակի տարածքը ողջ երկիրն է: Ազդեցության տակ գտնվող տարածքի տարածաշրջանային մակարդակի մեջ մտնում են երկու մարզեր, որոնք տարածվում են հանքավայրով, դրանք են՝ Վայոց Ձորի և Սյունքի մարզերը: Ազդեցության տակ գտնվող տեղական մակարդակում այն բնակավայրերն են, որտեղ բնապահպանական և սոցիալական ազդեցություններից կլինեն փոփոխություններ: Ազդեցության տակ գտնվող տեղական մակարդակը կապված է Ծրագրի ազդակիր անձինք (ԾԱԱ) սահմանման հետ, որը վերաբերում է ամենամոտ երեք գյուղական բնակավայրերի (Գորայք, Գնդեվազ և Սարավան (ներառյալ Սարալանջ և Ուղեձոր)) և Ջերմուկ քաղաքի բնակիչներին (ներառյալ Կեչուտը) (Նկար 1.5):

Ամուլսարի ծրագրի զարգացումն առնչվում է տեղի բնակչության ժողովրդագրական բնութագրի տարբեր ասպեկտների հետ: Հիմնական խնդիրները ներառում են բնակչության ավելացումը՝ տեղամաս նոր աշխատողներ բերելու միջոցով, հնարավորինս խրախուսել աշխատանք փնտրող միգրանտների ներհոսքը և առկա սոցիալական կառույցների փոփոխությունը:

Այս բաժնի միջոցով փորձ չի արվել վերլուծելու, թե արդյոք բնակչության աճը դրական ազդեցություն կունենա, թե բացասական: Փոխարենը, այս բաժինը դիտարկում է առավել տուժած համայնքների բնակիչների և նրանց կյանքի որակի վրա երկրի ներսում նոր վերաբնակեցվողների ներհոսքի, վերադարձող ընտանիքների անդամների և այլ միգրանտների միջև հավանական փոխազդեցությունները:

Այս բաժնում անդրադարձած հիմնական ազդեցություններից են.

- Ներհոսք, և բնակչության տեղաշարժը

- Սոցիալական խնդիրներ:

### ***Ներհոսք***

#### ***Ծրագրի գործունեության ազդեցությունը ներհոսքի վրա և բնակչության տեղաշարժը***

Ազգային մակարդակում, աշխատանքային միգրացիայի միտումը սովորական է. աշխատողները լքում են գյուղական վայրերը և տեղափոխվում են քաղաքային վայրեր (օր. Երևան) կամ այլ երկրներ (օրինակ Ռուսաստան) աշխատանք որոնելու: Համայնքում տնտեսական հնարավորությունների ընկալված մակարդակն ազդում է գյուղական վայրերում միգրացիայի մակարդակի վրա: Դա ակնհայտ էր 2013թ. և 2014թ. ազդեցության տակ գտնվող տեղական վայրերում, երբ Ամուլսար ծրագրի զարգացումը հետաձգվել էր, և տեղական համայնքներում միգրացիայի մակարդակն աճել էր: Ակնկալվում է, որ Ծրագրի զարգացումը կվերացնի այս միտումը, կամ, առնվազն, կնվազեցնի, որի արդյունքում ավելի քիչ գյուղացիներ հարակից գյուղերից կլքեն իրենց բնակավայրն աշխատանքի որոնման նպատակով, և նրանք, ովքեր հեռացել են, կվերադառնան՝ տեղում հնարավորություններ ստեղծելու համար:

### ***Շինարարության փուլ***

Շինարարության թեժ փուլում կպահանջվի մոտ 1,300 աշխատակից: Շինարարության համար անհրաժեշտ հմտություններից ելնելով՝ ակնկալվում է, որ շինարարության մեջ աշխատակիցների 70 տոկոսը կներգրավվեն Հայաստանի այլ մասերից և, հնարավոր է, այլ երկրներից:

Կազմակերպությունը կկառուցի 550-ից 920 շինարարներին տեղավորելու համար նախատեսված ճամբար, որտեղ մեծամասամբ կապրեն ոչ տեղացի շինարարները. դրա հետ մեկտեղ Ջերմուկում կօգտագործվեն հյուրանոցներ և բնակարաններ:

(Տես Բաժին 6.21 լրացուցիչ մանրամասների համար): Շինարարության թեժ փուլում մոտ 300 ոչ տեղացի շինարարներ կտեղավորվեն Ջերմուկի

հյուրանոցային համալիրներում: Ոչ տեղացի աշխատողները այն աշխատողներն են, որոնք բնակվում են Ծրագրի շրջանակներից դուրս գտնվող մարզերում:

Աշխատողների բնակեցման ճամբարը կգտնվի ԿՏՀ-ում՝ ԱԴՎ կայանից արևմուտք(մոտավորապես 2,5կմ հարավ Գնդեվազից: (տես Նկար 3.1): Աշխատողներին բնակեցնելու համար նախատեսված ցանկապատված ճամբարը կդեկավարվի տեղական համայնքներում շինարարական մեծ աշխատուժի հետ կապված խափանումները նվազեցնելու նպատակով:

Շինարարության համար անհրաժեշտ մոտավորապես 380 աշխատողները կլինեն տեղի բնակիչներ: Ակնկալվում է, որ այս աշխատողները կշարունակեն մնալ իրենց տներում շինարարության երկու տարվա ընթացքում՝ օգտվելով ավտոբուսների ծառայություններից, որոնք կտրամադրվեն Լիդիանի կողմից՝ աշխատակիցներին ամեն օր տեղափոխելու համար: Այսպիսով, (զրոյից մինչև 370) աշխատակիցներին Ջերմուկի հյուրանոցներում տեղավորելու տեղական զբաղվածության պոտենցիալը հնարավոր է ապահովի ներհոսքի որոշակի մակարդակ:

Շինարարության ընթացքում 550-ից 920 աշխատակիցների համար նախատեսված փակ ճամբարի կիրառումն ամենայն հավանականությամբ կնվազեցնի (սակայն չի բացառի) մարդկանց՝ այս մարզ տեղափոխվելու դրդապատճառները, ովքեր կցանկանան այդ հատվածի աշխատուժին տարբեր ծառայություններ մատուցել: Կադրերի հավաքագրումը տեղական համայնքներից և ճամբարից դուրս ապրող աշխատակիցների հնարավոր ներկայությունը, (տեղավորում՝ հյուրանոցներում, ճամբարի գերբեռնվածության ժամանակ) կախված տվյալ ճամբարի չափսից, ամեն դեպքում կարող է հրապուրիչ լինել մարդկանց՝ դեպի այդ գոտի ներհոսքի համար: Եթե ընտրված լինի փոքր ճամբար (550 տեղ) աշխատանքների թե՛ծ շրջանում մոտ 750 աշխատակից կտեղավորվի ճամբարից դուրս, ինչը զգալիորեն կբարձրացնի դրամական եկամուտների մակարդակը համայնքներում և տեղացիների

գնողունակությունը (ժամանակավոր և մշտական): Սա, հավանական է, դիտվի որպես լավ հնարավորություն պատահական ներգաղթյալների համար:

Շինարարական փուլի ընթացքում աշխատողների տեղավորման պահանջները հաշվի են առնված ԲՄԱԳ-ի առանձին գլխում (Տես Գլուխ 6.21) և աշխատողների տեղավորման հետ կապված Կառավարման պլանում (Տես Հավելված 6.24). Այս գլխում հաշվի են առնված միայն ներհոսքի հետ կապված ասպեկտները:

### ***Շահագործման փուլ***

Շահագործման փուլը կպահանջի մոտ 657 մարդուց կազմված աշխատուժ: Ծրագիրը կփորձի նվազեցնել ներհոսքը՝ հնարավորության դեպքում առաջնահերթությունը տալով տեղի զբաղվածությանը (Տես Բաժին 6.14 լրացուցիչ տեղեկությունների համար): Լիդիանն ակնկալում է, որ շահագործման աշխատուժի 30%-ը կձևավորվի տեղի տարածքներից և հարակից քաղաքային կենտրոններից (օր. Վայք և Սիսիան): Տեղի համայնքների աշխատողները Ծրագրում աշխատելու ընթացքում կշարունակեն բնակվել իրենց տներում: Աշխատանքների սկզբում աշխատուժի 5% կլինեն օտարերկրացիներ, որոնց թիվը ժամանակի ընթացքում կնվազեցվի: Տեղի բնակչության շրջանում համապատասխան հմտությունների բացակայության պարագայում, մասնագետներ կհրավիրվեն այլ մարզերից: Այս հանձնառությունը գրանցված է Լիդիանի տեղի կադրերի հավաքագրման ընթացակարգում, որը հավասար կերպով վերաբերում է թե՛ կազմակերպությանը, և թե՛ կապալառուներին: Շինարարության փուլում Լիդիանի կողմից կկազմակերպվեն վերապատրաստման ծրագրեր՝ օժանդակելու տեղի բնակիչների աշխատունակության բարելավմանը՝ շահագործման փուլին ընդառաջ:

Շահագործման փուլում Ջերմուկի հյուրանոցը, կօգտագործվի Լիդիանի կողմից՝ տեղավորելու մոտ 250 աշխատակցի: Ենթադրվում է, որ այս աշխատակիցները

կլիներն մասնագետներ, ովքեր տեղի բնակիչ չեն և կաշխատեն ռոտացիոն սկզբունքով՝ պարբերաբար վերադառնալով իրենց ընտանիքներ և բնակավայրեր: Սա նշանակում է, որ մոտ 405 աշխատակից ևս պետք է բնակեցվի տեղի տարածքում: Եթե աշխատուժի 30 տոկոսը վարձվի տեղացիներից, մնացած 210 աշխատակիցներին հարկ կլինի տեղավորել: Ենթադրվում է, որ այդ աշխատակիցները հանքարդյունաբերական աշխատանքների ընթացքում իրենց ընտանիքների հետ միասին կտեղավորվեն Ծրագրի տարածքում: Կադրերի հավաքագրման նախաձեռնություններն ուղղված կլինեն հնարավորինս լրացնել այս թափուր աշխատատեղերը տեղի բնակիչներով, սակայն ամենայն հավանականությամբ սա նույնպես կգրավի աշխատանք փնտրող հնարավոր ներքին միգրանտներին:

Բացի տեղական տարածք նոր աշխատողներ բերելուց, Ծրագրի հետ առնչվող տնտեսական հնարավորությունները հավանաբար ազդեցություն կունենան Շահագործման փուլում տեղական տարածքում բնակչության տեղաշարժի և ներհոսքի վրա: Ծրագրից բխող զբաղվածությունը զգալիորեն կբարձրացնի դրամական եկամուտների մակարդակը համայնքներում և տեղացիների գնողունակությունը (ժամանակավոր և մշտական): Աշխատուժի բնակեցման բաց բնույթը և տեղի զբաղվածության ավելի բարձր մակարդակն այս փուլում զգալիորեն կբարձրացնեն տեղի բնակչության (ժամանակավոր և մշտական) գնողունակությունը: Հավանական է, որ աշխատանք փնտրող միգրանտների համար սա դիտվի լավ հնարավորություն: Ենթադրվում է, որ կլիներն նաև Ծրագրի՝ տեղի մատակարարման քաղաքականությունից առաջացած հնարավորություններ, որոնք կարող են խթանել ներքին միգրանտների որոշակի հոսքը:

Երկրորդ անցումը կարող է տեղի ունենալ, երբ ծրագիրը տեղափոխվի շահագործման փուլից դեպի հանքային փակման փուլ: Փակման փուլում, զբաղվածության մակարդակներն աստիճանաբար կնվազեն՝ հանգեցնելով

անուղղակի զբաղվածության հնարավորությունների նվազեցմանը: Ներհոսքի մակարդակների վրա այս անցումի էֆեկտը կախված կլինի միգրանտների քանակից, որոնք տեղափոխվել են այս տարածք շահագործման փուլում: Այս փաստին հատուկ կանդրադառնանք որպես հանքային փակման փուլի պլանավորման մաս:

**Հնարավոր ներհոսքի ազդեցությունները**

Երկրի ներսում վերաբնակվողները կարող են իրենց ընտրությամբ տեղափոխվել Ծրագրի տարածք՝ պայմանավորված մի շարք պատճառներով, որոնց թվում են զբաղվածությունը և անուղղակի տնտեսական հնարավորությունները (ամփոփված է Աղյուսակ 6.12.1, Տես նաև Գլուխ 6.21 ):

Աղյուսակ Error! No text of specified style in document..1 Ներքին միգրանտների տիպաբանությունը			
Բնութագրություն	Հավանականություն	Ամուլսարի պլանը	
1	Վերադարձող ընտանիք, ընդլայնված ընտանիքի անդամներ և տեղանքի նախկին բնակիչներ	Շինարարություն. հավանական	Գորայքի, Սարավանի, Գնդեվազի և Ջերմուկի նախկին բնակիչները, ովքեր ձգտում են վերադառնալ իրենց բնակավայրերը, ակնկալում են բարելավված կենսապայմաններ և զբաղվածություն, կամ հնարավորություն ապրանքներ և
	Գործառնություն. հավանական		

Աղյուսակ Error! No text of specified style in document..1 Ներքին միգրանտների տիպաբանությունը		
Բնութագրություն	Հավանականություն	Ամուլսարի պլանը
		ծառայություններ մատուցել Ծրագրին կամ տեղի բնակչությանը:
2	<p>Ծրագրից դուրս Ծրագրի աշխատողները և նրանց անմիջական կամ ընդլայնված ընտանիքները</p>	<p>Շինարարություն. Որոշ չափով հավանական</p> <p>Գործառնություն. հավանական</p> <p>Ծրագրի ժամանակավոր կամ մշտական աշխատողները, կամ պայմանագրային աշխատողները, ովքեր տեղափոխվել են տարածք ընտանիքներով կամ առանց ընտանիքի՝ աշխատավայրին մոտ լինելու նպատակով</p>
3	<p>Տեղական բնակչությանն ապրանքներով և ծառայություններով պոտենցիալ ապահովողներ</p>	<p>Շինարարություն. Հավանական</p> <p>Առևտրականները, ձեռնակատերերը, փոքր և միջին ձեռնարկությունների տերերը, մարմնավաճառները, և այլն, նպատակ ունեն էականորեն բարձրացնել մաքուր եկամուտի չափը՝ ապրանքների և ծառայությունների մատուցմամբ: Ջերմուկը</p>

Աղյուսակ Error! No text of specified style in document..1 Ներքին միգրանտների տիպաբանությունը			
Բնութագրություն		Հավանականություն	Ամուլսարի պլանը
		Գործառնություն. հավանական	կդառնա նման ներքին միգրանտների համար ամենահավանական վայրը՝ հաշվի առնելով այն, որ տարածքն ունի ավելցուկային բնակարանային ծավալ՝ 1980-ականներից հետո բնակչության քանակի նվազմամբ պայմանավորված: Ջերմուկը լինելով ամենամոտ քաղաքը, որտեղ կարելի է բնակվել, ստանալ բժշկական ծառայություն և կան ժամանցային օբյեկտներ, գրավիչ կլինի այս տիպի ներքին միգրանտների համար:
4	Ծրագրին ծառայություններ	Շինարարություն. Որոշ չափով հավանական	Ֆորմալ սեկտորի ձեռնարկատերեր և ՓՄՁ-ներ. նպատակ ունենալով

Աղյուսակ Error! No text of specified style in document..1 Ներքին միգրանտների տիպաբանությունը			
Բնութագրություն		Հավանականություն	Ամուլսարի պլանը
	մատուցողները	Գործառնություն. հավանական	պայմանագրեր կնքել նախագծին և կապալառուներին ապրանքներ և ծառայություններ մատուցելու համար, ձգտում են գրասենյակներ հիմնել Գորայքում և Ջերմուկում:
5	Աճող բնակչությանը ծառայություն մատուցողներ	Շինարարություն. հավանական	Ձեռնարկատերերը և ՓՄՁ-ները նպատակ ունենալով օգտվել նոր բիզնես հնարավորություններից, որոնք կատալիզացված են նախագծի զարգացմամբ և գործունեությամբ, կձգտեն իրենց ներկայացուցչությունը հիմնել Ջերմուկում, և կախված, թե ինչ տեսակ ծառայություն են առաջարկում, կարող են ներգրավվել տարածքի յուրաքանչյուր գյուղ:
		Գործառնություն. Հավանական	

Աղյուսակ Error! No text of specified style in document..1 Ներքին միգրանտների տիպաբանությունը			
Բնութագրություն		Հավանականություն	Ամուլսարի պլանը
6	Աշխատանք փնտրող միգրանտներ	Շինարարություն. հավանական	Առանց որակավորման, թերի որակավորում ստացած կամ որակավորված մարդիկ՝ ձգելով ուղղակի կամ անուղղակի զբաղվածության կամ ունենալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորություններ, կներգրավվեն Գորայք կամ Ջերմուկ, ինչպես որ նշվեց վերևում:
		Գործառնություն. հավանական	

Գրեթե անհնար է կանխատեսել Ծրագրի հնարավոր առաջացրած ներհոսքի մասշտաբը, և, որպես այդպիսին, բոլոր ենթադրությունները պետք է կատարվեն մեծ զգուշությամբ: Ներհոսքի մասշտաբի վրա ազդում են տարբեր գործոններ, ներառյալ (բայց ոչ սահմանափակող)՝ ընդունող բնակչության շարժունությունը, երկրի այլ տարածքներում տնտեսական հնարավորությունների և աշխատանքի առկայությունը, աշխատանքի համար միգրացիաների ավանդույթը և այլն: Հայաստանն ունի համեմատաբար շարժունակ բնակչություն, և գոյություն ունի արդեն ձևավորված տենդենց, երբ երիտասարդ տղամարդիկ աշխատանքի համար միգրացիաներ են կատարում (մեծամասամբ դեպի Ռուսաստան), և երկրում կան համեմատաբար քիչ թվով գյուղական աշխատանքներ: Հաշվի առնելով այս համառոտագիրը՝ հավանական է թվում, որ Ամուլսար ծրագրի զարգացումը

կառաջացնի ներհոսքի որոշ մակարդակ: Աղյուսակ Error! No text of specified style in document..1-ում նշված ներհոսքի կատեգորիաները կիրառելով և հաշվի առնելով թե շինարարական, թե շահագործման փուլերը՝ կարելի է կատարել հետևյալ ենթադրությունները.

- Վերադարձող ընտանիք, ընդլայնված ընտանիքի անդամներ և տեղանքի նախկին բնակիչներ. եթե ենթադրենք, որ 2015թ. Գորայքից, Գնդեվազից, Սարավանից և Ջերմուկից սեզոնային միգրացիա կատարած մարդկանց 50%-ը կվերադառնան իրենց համայնքներ, սա հավասար կլինի մոտ 137 բնակչի<sup>1</sup> (տես Աղյուսակ 4.12.6 միգրացիայի տվյալների համար): Քանի որ աշխատանքի միգրացիա կատարող մարդկանց մեծամասնությունը 21-50 տարեկան ամուսնացած տղամարդիկ են, խելամիտ է նաև ենթադրել, որ նրանք կվերադառնան որպես անհատ տղամարդիկ:
- Ծրագրի տեղանքից դուրս Ծրագրի աշխատողներ և նրանց անմիջական կամ ընդլայնված ընտանիքներ. այս տեսակի ներհոսքի մասշտաբը անմիջականորեն կապված է տեղի համայնքում վերապատրաստման դասընթացների և տեղի բնակչության հավաքագրման ջանքերից: Շինարարությունն ու գործառնությունը հաշվի առնելով՝ նախատեսվում է, որ աշխատուժի մոտավորապես 30%-ը կլինի տեղացիներից կազմված շինարարական փուլի ժամանակ: Սա կազմում է մոտ 380-ից 390 աշխատատեղ շինարարական թեժ փուլի ժամանակ: Վերապատրաստման ծրագիրը՝ տեղացի աշխատակիցների հմտություններն ու ունակությունները բարձրացնելու նպատակով, կսկսի միայն շինարարական փուլում, քանի որ կարող է շինարարական վաղ փուլում մարդկանց ներհոսք սկսել, ովքեր կփորձեն “իրավասու” լինել այդ աշխատանքի համար: Շահագործման փուլում, եթե աշխատուժի 30%-ը

<sup>1</sup> Սեզոնային միգրացիոն թվերը գրանցված “Գյուղի Անձնագրում” 2015 թ. էապես նվազել էին 2014 թ. գրանցումների համեմատ (50% կրճատում): Պատճառն անհայտ է:

լինեն տեղի բնակիչներ, ապա հնարավոր է մինչև 210 աշխատակիցների ներհոսք իրենց ընտանիքների հետ՝ աշխատանքի նպատակով (ենթադրենք 250 աշխատակից ապրում է Ջերմուկի հյուրանոցում նաև շահագործման փուլում): Բաժին 4.12.6-ը ցույց է տալիս, որ Հայաստանում միջին ընտանիքը բաղկացած է չորս անձից, հետևաբար կարելի է ենթադրել, որ մինչև 840 մարդ (210 ընտանիք) կարող է միգրացիա կատարել դեպի համայնք վերը նշված տարբերակի դեպքում:

- Տեղական բնակչությանն ապրանքներով և ծառայություններով հնարավոր ապահովողներ, Ծրագրին ծառայություններ մատուցողներ, աճող բնակչությանը ծառայություն մատուցողներ և աշխատանք փնտրող միգրանտներ. այս չորս կատեգորիաները դիտարկվում են հավաքական, քանի որ չկան ավելի մանրամասն գնահատում կատարելու համար անհրաժեշտ տվյալներ: Այս քննարկման կոնտեքստում այս չորս տեսակի միգրանտները միասին կարող են ավելացնել այս համայնքներ միգրացիա կատարող անձանց թիվը լրացուցիչ 300-400-ով, շինարարական և շահագործման փուլերի համեմատաբար նման մակարդակներով: Ենթադրվում է, որ այս մարդկանցից շատերը միգրացիա կկատարեն որպես անհատներ՝ տեսնելու համար՝ արդյոք հաջողություն կունենան, մինչ ընտանիքի անդամներին տարածք տեղափոխելը: Աշխատանք փնտրող այս միգրանտներն ամենայն հավանականությամբ կլինեն տղամարդիկ:

Այս թվերի համադրությունն ենթադրում է, որ շահագործման փուլում հնարավոր է 1000-ից ավել մարդկանց ներհոսք դեպի համայնքներ, որոնց զգալի մասը կկազմեն միայնակ տղամարդիկ: Այս գնահատումը չպետք է օգտագործվի պլանավորման համար, այլ ավելի շատ դիտարկվի որպես ծրագրի կողմից առաջացած ներհոսքի հնարավոր մասշտաբի վերաբերյալ ցուցիչ:

Գյուղերում այս հնարավոր ներհոսքի ազդեցություններն հավասարաչափ չեն զգացվի. Հավանական է, որ Ջերմուկը ներհոսքից ամենաշատ ազդեցությունը կրի՝

պայմանավորված նախագծի գործունեության վայրով, բնակելի տարածքներով, ժամանցի վայրերով և հնարավորություններով, որ այս չափի քաղաքը կարող է առաջարկել: Գնդեվազը նույնպես հավանական է, որ ունենա ներհոսքի ավելի բարձր մակարդակ՝ մյուս գյուղերի համեմատ՝ պայմանավորված Ծրագրի գործունեությանը մոտ գտնվելով: Չի ակնկալվում, որ ներքևում նշված ազդեցությունները (բացառությամբ ինֆլյացիայի, որին վերաբերում է Բաժին 6.13-ը) տարբեր կերպ ազդեն տարբեր խմբերի վրա, և դրանք սեռից կախված չեն լինի:

Ծրագրի տարածք չկարգավորված ներհոսքը (Ծրագրից առաջացած ներհոսք) կարող է հնարավոր բացասական ազդեցություն ունենալ՝ նվազեցնելով կենսամակարդակը, ինչը պայմանավորված է տեղի ռեսուրսների և առկա ենթակառուցվածքների վրա աճող ճնշմամբ: Այդպիսի ճնշում կարող է ազդել համայնքային ռեսուրսների վրա, ինչպիսիք են դպրոցները և առողջապահական հաստատությունները, կամ գերազանցեն համայնքի ենթակառուցվածքների կարողությունները: Հնարավոր ազդեցությունները բերված են:

- Կրթություն – ազդեցության տակ գտնվող տեղական տարածքում կրթական հաստատությունները ներկայումս աշխատում են իրենց կարողությունների շրջանակներից էականորեն քիչ (տես Բաժին 4.14.1): 2014թ. տեղի միջնակարգ և ավագ դպրոցներն աշխատել են իրենց կարողությունների միջինում 27%-ով ( ուշագրավ բացառություն է Ջերմուկի թիվ 1 դպրոցը, որն աշխատել է իր կարողությունների գրեթե ամբողջական չափով)՝ ունենալով լրացուցիչ 1,845 ուսանողների ազատ տեղ: Դպրոցները կշահեն լրացուցիչ աշակերտների թվի ավելացումից՝ պայմանավորված ներգաղթի կամ աշխատողների ընտանիքների ներհոսքով:
- Կոյուղի – Շինարարության ընթացքում աշխատողների բնակեցման ժամանակավոր ճամբարը 550-ից 920 տեղով կշահագործի կոյուղու ջրերի մշակման իր սեփական կայանը՝ չազդելով համայնքի համակարգի վրա: Մշակված ջուրը կօգտագործվի հողային աշխատանքներում կամ կթափվի

ինֆիլտրացիոն խավանքներ՝ Ամուլսարի ծրագրի տարածքում: Ջերմուկում հաստատված լրացուցիչ աշխատուժը ( մինչև 370 հոգի՝ 550-ից 920 տեղով աշխատողների բնակեցման ժամանակավոր ճամբարի հիմքի վրա) շինարարության թեժ պահին կօգտվի Ջերմուկի առկա կոյուղուց: Ջերմուկի կեղտաջրերի մշակման կայանը բարելավվել է 2 փուլով: Առաջին փուլը ներառում էր մեխանիկական տարանջատման կայանի տեղադրում, որն ավարտվել է 2014 թ, դեկտեմբերին KfW-ի օժանդակությամբ: Այս կայանը կարող է ապահովել 22,000 բնակչություն ունեցող քաղաք, ինչը գերազանցում է ներկայիս պահանջարկը, և ցանկացած ավելացած պահանջարկ կապված ծրագրից առաջացած ներհոսքի հետ Ջրամշակման կայանի բարեկարգման 2րդ փուլի ժամանակը, որը պետք է կենտրոնանա քիմիական մշակման վրա, պարզ չէ: Մինչդեռ առկա ջրահեռացման համակարգում աշխատող մինչև 1000 լրացուցիչ վերաբնակիչների վրա ազդեցությունը համեմատաբար փոքր է, և ավելի կնվազի, երբ կիրականացվեն 2րդ փուլի աշխատանքները: Կոմերցիոն սեպտիկ համակարգերը բավարար կլինեն գրասենյակներից և գործարաններից կեղտաջրերի կառավարման և մշակման համար: Սեպտիկ համակարգերը կտրամադրվեն հանքային բեռնատարների խանութների, հիմնական փշրիչի, երկրորդական փշրիչի, ԱԴԿ գործարանի, վարչական գրասենյակների և աշխատողների բնակեցման ճամբարի համար: Գնդեվազը, Գորայքը և Սարավանը չունեն աղտոտված ջրերի մշակման որևէ գործող համակարգ: Լիդիանը կաշխատի գյուղապետարանների հետ՝ երաշխավորելու, որ համայնքների ընդլայնմանն համընթաց գյուղի կառուցման ժամանակ ընդգրկվեն նաև սեպտիկ համակարգերը: Հյուրընկալող համայնքի կոյուղու համակարգը ոչ մի ազդեցություն չի կրի:

- Ջուր - Ծրագրի համար ջրի արդյունահանումը չի ազդի հյուրընկալող համայնքի ջրամատակարարման վրա (տես Մաս 6.10), ինչպես նաև որևէ ազդեցություն ջրամատակարարման վրա չի նախատեսվում ներհոսքի շնորհիվ բնակչության աճի պատճառով

- Թափոններ – Ծրագրի հանքային աղբավայրը կառուցվելու է Ծրագրի տարածքում՝ ԴԱԼ-ի արևելյան կողմում, հանքային գործողություններից առաջացած կենցաղային և անվտանգ արդյունաբերական թափոնների կառավարման համար: Այն կունենա մոտավորապես 3մ խորություն, հորիզոնական հարթակներ ամբողջ պարագծով և արտաքին մակերևութային ջրերի շրջանցում կամ էլ հորիզոնական հարթակներ՝ պահելու մակերևութային ջրերի արտահոսքը աղբավայր: Աղբավայրը կկառուցվի ստանդարտներին համապատասխան, ներառյալ ՄՖԿ-ի Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ուղեցույցի և ԵՄ անվտանգ թափոնների տեղակայման մասին հրահանգների: Ծրագրի իրականացման արդյունքում հանքավայրում և շրջակա բնակավայրերում առաջացած կենցաղային բոլոր թափոնները, որոնք վերամշակված կամ վերօգտագործված չեն, կհեռացվեն այս աղբավայրից: Ներկայումս, Ջերմուկի թափոնները լցված են արդեն գոյություն ունեցող աղբավայրում՝ քաղաքից մոտ 2 կմ արևելք: Ընկերությունը կհամագործակցի Ջերմուկի ղեկավար մարմինների հետ տարբերակներ մշակելու քաղաքային թափոնների տեղակայման բարելավման ուղղությամբ՝ հաշվի առնելով Ծրագրից առաջացած մարդկային ներհոսքի հետ կապված պոտենցիալ աճող պահանջարկը: Մինչև հարմար և բարեկարգված աղբավայր չկառուցվի Ջերմուկի քաղաքապետարանի կողմից, հանքից, աշխատողների բնակեցման ճամբարից և Ջերմուկում բնակեցված աշխատուժի կենսագործունեությունից առաջացած կենցաղային թափոնները կտեղափոխվեն հանքի տարածքում կառուցված աղբավայր:
- 
- Ինֆլյացիա – Բնակչության աճն հավանական է, որ բարձրացնի որոշ առաջնային պարագաների պահանջարկը՝ բնակեցում և հիմնական սնունդ:
- Ներհոսքից առողջապահական ենթակառուցվածքների և ծառայությունների վրա պոտենցիալ ազդեցություններին անդրադարձ է կատարվել Բաժին 6.18-ում:
- Մեղմացուցիչ միջոցառումները նպատակ ունեն նվազեցնելու ներհոսքի մաշտաբները և կառավարելի դարձնել պոտենցիալ բացասական ազդեցությունները:

### ***Ներհոսքի ազդեցությունների մեղմացուցիչ միջոցառումներ***

Այն գործողությունները, որոնք Ծրագրի շրջանակներում կիրականացվեն ներհոսքը նվազեցնելու և հավանական բացասական ազդեցությունները մեղմացնելու համար բաժանվում են երկու կատեգորիաների.

- Միջոցառումներ, որոնք օգնում են նվազեցնել ներհոսքը, և
- Միջոցառումներ, որոնք օգնում են կառավարել ներհոսքի ազդեցությունները:

Նվազեցման միջոցառումներն իրենց մեջ կներառեն.

- Տեղի բնակիչների համար նախատեսված վերապատրաստման ծրագրի մշակում ու իրականացում՝ Ծրագրում աշխատանքի ընդունվելու նպատակով: Վերապատրաստման ծրագրի նախագիծը պատրաստվել է 2014թ. անցկացված ուսումնասիրության (նախնական արդյունքները տրամադրված են Բաժին 4.17-ում) արդյունքում ստացված տեղեկությունների և շինարարական ու շահագործման փուլերում անհրաժեշտ պաշտոնների աշխատանքային նկարագրերի հիման վրա: Ակնկալվում է, որ որևէ կոնկրետ հմտության համար վերապատրաստումը չի գերազանցի 6 ամիսը, և ազդեցության տակ գտնվող տեղական տարածքի բոլոր բնակիչները կկարողանան մասնակցել վերապատրաստմանը՝ կարողությունների հիման վրա: Վերապատրաստման դասընթացներ են ծրագրավորվում՝ ուղղված շահագործման պաշտոններին, քանի որ դրանք ապահովում են ավելի երկարաժամկետ հնարավորություններ, քան շինարարության կարճաժամկետ պաշտոնները: Առավել մանրամասն տեղեկությունների համար տես Մաս 6.14:
- Ծրագրով նախատեսվում է ունենալ երկու ադմինիստրատիվ տեղամասային գրասենյակներ. մեկը կտեղակայվի բեռնատար մեքենաների արհեստանոցի կառույցի մոտ, իսկ մյուսը՝ ԱԴՎ կայանում: : Ջերմուկ

քաղաքից և գյուղերից հեռավորության վրա գրասենյակների գտնվելու հանգամանքը կնվազեցնի այն հավանականությունը, որ մարդիկ կասցացնեն կոնկրետ գյուղը Ծրագրում կադրերի հավաքագրման հնարավորությունների հետ: Այս փաստը չի կարող նվազեցնել չպլանավորված միգրացիայի մակարդակը: Դրա վրա կարող է ազդել այն, որ մյուս գյուղի համեմատ մեկ գյուղն ավելի մեծ ազդեցության տակ կընկնի: Որպեսզի ներգաղթը չխթանվի Ծրագրի գրասենյակների մոտ, կադրերի որևէ հավաքագրում տեղի չի ունենա “հանքի մուտքի” մոտ: Հաշվի առնելով տեղի համայնքներում մեքենաներ ունենալու ցածր մակարդակը՝ վերապատրաստման կենտրոն բացելը ծրագրից մեծ հեռավորության վրա էապես կնվազեցնի տեղի կադրերի հավաքագրումը՝ ի հակառակ Ծրագրի նպատակներին:

- Տեղական կադրերի հավաքագրման ընթացակարգի իրականացումը, որտեղ սահմանված է՝
  - Լիդիանը կպահպանի ազդեցության տակ գտնվող տարածքի բնակիչների համար մշակված թարմացված հմտությունների ռեզիստրը: Այս ռեզիստրը կօտագործվի որպես հավաքագրման բոլոր գործընթացների հիմք:
  - Ծանուցագիր – բոլոր թափուր աշխատատեղերի մասին տեղեկությունները կհայտարարվեն Գնդեվագում և Ջերմուկում Ամուլսարի տեղեկատվական կենտրոններում վերջնաժամկետից առնվազն 2 շաբաթ առաջ: Միայն տեղի բնակիչներն իրավունք կունենան աշխատանքի համար դիմելու Ամուլսարի տեղեկատվական կենտրոններ: Կադրերի հավաքագրման վայրը նույնպես կլինի Երևանում՝ գոտուց դուրս գտնվող հայերին աշխատանքի համար դիմելու գործընթացը դյուրացնելու նպատակով:
  - Դրամաշնորհ – որոշումները հիմնված կլինեն արժանիքների,

նվիրվածությանը անվտանգության և անձնական վարքագծի վրա: Այս համատեքստում, առաջնահերթ կոդիտի տեղական<sup>2</sup> հավաքագրումը: Եթե տեղական համատեքստում այդ հմտությունները բացակայում են, առաջնահերթ դիտվում են տարածաշրջանային թեկնածուները: Եթե հմտությունները բացակայում են տարածաշրջանային մակարդակում, առաջնահերթությունը է տրվում ՀՀ քաղաքացիներին, այլ ոչ թե օտարերկյա թեկնածուներին:

- Պայմաններ կապալառուների վերաբերյալ – Ամուլսարի Ծրագրում աշխատանքի համար հայտ ներկայացնելուց, կապալառուները պետք է ներկայացնեն, թե ինչպես են իրենք համապատասխանելու Տեղական հավաքագրման ընթացակարգին և նշեն իրենց կողմից հավաքագրված տեղական, տարածաշրջանային և ազգային կադրերի համամասնությունը: Եթե այս մակարդակները ցածր են, կապալառուն պետք է ներկայացնի, թե ինչպես է նա պայմանագրի ընթացքում զարգացնում հմտությունները և բարձրացնում մակարդակը:

- Զբաղվածության կապի/խորհրդակցության ծրագիր, որը հետևողականորեն և պարզ տեղեկացնում է ազգային և տեղական բնակչությանն ընկերության Տեղական կադրերի հավաքագրման ընթացակարգի և մարդկային

<sup>2</sup> Տեղական – Այս գործընթացի համատեքստում, տեղական<sup>2</sup> բառում ընգրկվում են Գնդեվագում Սառավանում, Գորայքում և Ջերմուկում/Կեչուտում բնակվող մարդկանց: Այն նաև ներառում է այն անձանց, որոնք ծնվել են այս գյուղերում, սակայն տեղափոխվել են աշխատանք փոնտրելու նպատակով այլ վայրեր (օր. ներքին միգրանտներ):

*Տարածաշրջանային – այդ գործընթացի համատեքստում, “տարածաշրջանային” հասկացությունը ընդգրկում է Սյունիքի մարզի կամ Վայոց Ձորի մարզի բնակիչներին: Այն նաև ընդգրկում է անձանց, որոնք ծնվել են այս մարզերում, սակայն աշխատանք փոնտրելու համար տեղափոխվել են Հայաստանի այլ վայրեր:*

Ազգային – վերաբերում է Հայաստանում բնակվող բոլոր անձանց:

ռեսուրսների քաղաքականության մասին, աշխատանքի հնարավորությունների և պահանջների մասին:

:Պետք է իրականացվեն գյուղապետերի և քաղաքապետի հետ համաձայնեցված՝ բնակչության փոփոխությունների մոնիտորինգ՝ «Գյուղի անձնագիր» համակարգի միջոցով:

Կառավարման միջոցառումները հավանական բացասական ազդեցությունների մեղմացման ուղղությամբ ներառում են.

- Խորհրդակցություն տեղական կառավարման մարմինների հետ՝ չկարգավորված ներհոսքի հավանական անբարենպաստ ազդեցությունների համատեղ ճանաչումն ապահովելու համար: Լիդիանը պետք է աջակցի գյուղական ինքնակառավարման մարմիններին՝ պլանավորել բնակչության աճը՝ ներառյալ ծառայությունների վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ նկատառումները
- Բացահայտված և արդյունավետորեն կառավարվող դժգոհությունների վերանայման մեխանիզմ՝ համայնքների դժգոհությունների գրանցման համար, կամ ռեսուրսների վրա որևէ լարվածության մասին կարևոր տեղեկատվության տրամադրում, և
- Շարունակական ամենամայա խորհրդակցություն բնակչության հետ կապերի հանձնաժողովի (ԲԿՀ) խմբերի հետ, որը կօգտագործվի որպես ֆորմալ գործընթաց ներհոսքի չնախատեսված անուղղակի ազդեցությունների մասին տեղեկատվության ստացման համար:

### ***Ներհոսքի մնացորդային ազդեցություններ***

Ներհոսքի անուղղակի ազդեցությունները բարդ փոխազդեցություններ են: Մեղմացումն ուղղված է նվազեցնելու այն մարդկանց թիվը, ովքեր տեղափոխվում

են տարածք և բարելավում են տեղական զբաղվածության համար հնարավորությունները: Եթե տեղի են ունենում բացասական ազդեցություններ, գլխավոր մեղմացուցիչ միջոցառումները կապված կլինեն նշանակված դեկավարների հետ լավ կապերի հաստատմամբ, և ռեսուրսների ու ենթակառուցվածքների վրա լարվածությանը ժամանակին արձագանքելու հետ: Պատշաճ կերպով իրականացնելու դեպքում նման ազդեցությունները կարող են դեռ հնարավոր լինել, սակայն պետք է արագ հայտնաբերվեն և լուծվեն՝ խուսափելու և չվնասելու առկա բնակիչների կյանքի որակը կամ իրենց աղբյուրներից և ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունը (Աղյուսակ 6.12.2):

Աղյուսակ Error! No text of specified style in document..2 Ազդեցության գնահատում, ներհոսքի ազդեցություններ						
Ենթադասակարգ	Ուղղություն	Ծավալ	Տարածություն	Տևողություն	Ազդեցություն (սկզբնական)	Ազդեցություն (հետո)
Ներհոսք	Բացասական	Բարձր	Տեղական	Միջնաժամկետ	Էական (բացասական)	Չափավոր (բացասական)

Error! No text of specified style in document..2 *Սոցիալական խնդիրներ*

*Ծրագրի գործունեության ազդեցությունը սոցիալական խնդիրների վրա*

Սոցիալական խնդիրները կապված են աշխատողների, ծառայություն մատուցողների և այլ աշխատանք փնտրող միգրանտների ներհոսքի անուղղակի ազդեցությունների հետ: Այս երևույթը նույնպես դժվար կանխատեսելի է, սակայն Հայաստանի այլ մասերում և աշխարհում նմանատիպ նախագծերի իրականացումը ապացուցում են, որ գոյություն ունեն որոշ տեսակի խնդիրներ, որոնք սովորաբար առաջանում են մեծ թվով աշխատողների պատճառով, մեծամասամբ արական սեռի ներկայացուցիչների, ովքեր ապրում են առանց իրենց ընտանիքների, երբ նրանց տեղավորում են հյուրընկալող անձանոթ համայնքում:

Նախագծի շրջանակներում նոր և տարբեր մարդկանց խմբեր կբերվեն ազդեցության տակ գտնվող տեղական համայնքներ, և մինչև ժամանակ կբարձրանա մաքուր եկամուտը: Հատուկ սոցիալական հարցերը կապված աշխատուժի բնակեցման հետ նկարագրված են Գլուխ 6.21-ում:

### ***Հնարավոր սոցիալական խնդիրների ազդեցություններ***

Սոցիալական խնդիրներն հաճախ սկիզբ են առնում տարբեր սովորությունների և նորմերի միջև լարվածությունից: Դրանք նաև կապվում են վարքագծային փոփոխության հետ, որը կարող է սկիզբ առնել սոցիալ-տնտեսական դինամիկայի փոփոխություններից: Այս դեպքում, ամենամեծ փոփոխությունը կլինի նոր մարդկանց ներհոսքից, որոնցից շատերը գրեթե կապ չունեն ազդեցության տակ գտնվող տեղական տարածքի հետ, ինչպես նաև աշխատանքային շուկայում տեղի ունեցող փոփոխություններից, որոնք ենթադրում են վարձատրվող զբաղվածության զգալի ավելացում այն գյուղական բնակավայրերում, որոնք մեծապես կապված են եղել գյուղատնտեսության և զբոսաշրջության հետ, ինչպես նաև այլ ծառայությունների մատուցման հետ, որոնք ապրուստի հայթայթման միջոց են հանդիսացել Ջերմուկում: Նմանատիպ նախագծերի իրականացման ժամանակ հանդիպում են ավելի սպառման ավելացում, մարմնավաճառության

ընդլայնումը, սեռավարակների տարածումը և հանցագործության մակարդակի բարձրացումը իրենց աշխատանքային գործունեությանը կից համայններում: Այս ազդեցություններն անհամաչափ կազդեն տեղի համայնքների կանանց և աղջիկների վրա՝ ուղղակի կամ անուղղակի կերպով:

Սոցիալական խնդիրներն առաջանում են տնտեսական անհավասարությունից: Այն իրավիճակում, երբ մեծաքանակ տեղական բնակիչները դժվարություններ ունեն բավարար սնունդ գնելու հարցում, հանքային ոլորտում զբաղվածության հետ կապված հարաբերականորեն բարձր բարեկեցիկությամբ մարդկանց խմբերի առաջացումը կարող է խանդ առաջացնել, հատկապես եթե զբաղվածության պրակտիկայում և գնումների ժամանակ գործում է իրական կամ գիտակցված հին ծանոթ-բարեկամ մեխանիզմը կամ գոյություն ունի կոռուպցիա: Սահմանափակ նյութական միջոցներով անձինք կամ տնային տնտեսությունները կլինեն այս ազդեցության ամենախոցելի խմբերը:

Բոլոր համայնքներն էլ ընկալունակ են սոցիալական խնդիրների հետ կապված ազդեցություններին, սակայն առավել հավանական է, որ փոփոխություններ կլինեն Ջերմուկում, քանի որ այն կարող է հյուրընկալել առավելագույնը 370 աշխատակից շինարարական , և մոտավորապես 250 աշխատակից՝ շահագործման փուլում: Ամենայն հավանականությամբ Գնդեվազում նույնպես սոցիալական փոփոխություններ կլինեն, քանի որ այն համեմատաբար մոտ է ժամանակավոր շինարարական ճամբարին: Ճամբարը կտեղակայվի ԿՏՀ-ի շինարարական գոտում (Տես Նկար 3.1): Հաշվի առնելով, որ աշխատողների տեղավորման ճամբարը նախատեսված կլինի միայն հանքում աշխատող մարդկանց համար՝ ճամբարում և Ջերմուկում բնակվող աշխատակիցների միջև հնարավոր խառնաշփոթությունների առաջացման պատճառով, ինչպես նաև Գնդեվազի մոտ գտնվելը աշխատողների բնակեցման ճամբարին ևս կարող է խառնաշփոթությունների տեղիք տալ աշխատակիցների միջև:

Աշխատողների բնակեցման ճամբարը նաև կգործի որպես “չոր ճամբար” (արգելվելու է այլոհուլի օգտագործումը): Ծրագրի անվտանգ աշխատանքային

միջավայրն ապահովելու համար, Վարքագծի կանոնների և Աշխատողների վկայականի համաձայն պետք է պահպանել աշխատողների վարքագծի չափանիշները: Հնարավոր չի լինի սահմանափակել ոգելից խմիչքների օգտագործումը Ջերմուկի հյուրանոցներում տեղավորված աշխատակիցների մոտ, քանի որ կազմակերպության կողմից ստուգումներն ավելի քիչ կլինեն, այնուամենայնիվ, ակնկալվում է, որ վարվեցողության կանոնները կպահպանվեն թե աշխատողների, թե կապալառուների կողմից:

Ջերմուկը և ավելի քիչ չափով Գնդեվազը բնակավայրեր են, որոնք կարող են հյուրընկալել նաև այլ միգրանտների: Կացարանային պայմանների և ծառայությունների ավելցուկը, որոնք Ջերմուկում արդեն իսկ բնակեցված են զբոսաշրջիկներով և ոչ տեղացիներով, ընդլայնման այս գործընթացը պետք է որ ավելի դյուրին դարձնի, չնայած Ջերմուկն էլ ունի տուրիզմից եկամուտների փոխարինման հնարավորություն :

Ջերմուկի հյուրանոցային հարմարությունների օգտագործումը շինարարական և շահագործման փուլերում կբարձրացնի Ջերմուկի՝ հանքարդյունաբերական ծրագրից առաջագած հակվածությունը սոցիալական փոփոխությունների հանդեպ: Աշխատակիցները կտեղավորվեն սահմանափակ թվով հյուրանոցներում, և կարող են հյուրընկալվել զբոսաշրջիկների հետ միասին: Հանքարդյունաբերական աշխատուժի բնութագիրը էապես կտարբերվի տուրիստականից և աշխատակիցների սփռվածությունը Ջերմուկի տարբեր հյուրանոցներով կուժեղացնի այդ ազդեցությունը:

### ***Սոցիալական խնդիրների մեղմացման միջոցառումներ***

Տնտեսական անհավասարությունը կարող է առաջանալ անկախ մեղմացման միջոցառումներից: Այնուամենայնիվ այն կարող է նվազեցվել աջակցության ծրագրերի հաջող իրականացման միջոցով, որոնք ուղղված են ոչ արդյունաբերական (օրինակ՝ գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, մանր և միջին բիզնեսի զարգացում) հատվածների վրա: Այսպիսի աջակցությունը

կնվազեցնի լարվածությունը ներհոսող աշխատողների և տեղական բնակիչների միջև, եթե իրականացվի թափանցիկ՝ բոլոր տեղացի բնակիչների համար հավասար հնարավորություններով, հնարավորություններ ստեղծելով, որ հանքային ոլորտում աշխատողները նույնպես առավելություններ ստանան:

Հանքային կազմակերպության համար բարդ է ազդել համայնքում ակոհողի և թմրանյութերի օգտագործման հետ կապված այլ սոցիալական խնդիրների վրա: Սակայն, Լիդիանը կպահանջի, որպեսզի իր աշխատողները (և իր կապալառուները) պահպանեն վարքագծի որոշ չափանիշներ վարքագծի կանոնների և Աշխատողի վկայականի համաձայն: Աշխատանքի անցնելիս՝ բոլոր թեկնածուները (ներառյալ կապալառուները) և այցելուները պետք անցնեն Վարքագծի կանոնների վերաբերյալ վերապատրաստում: Վարքագծի կանոններն ընդգրկում են բոլոր աշխատողների և կապալառուների հանձնառությունները, որ իրենք կպահպանեն ստորև բերված չափանիշները՝

- Անձնակազմը չպետք է ունենա, վաճառի, տարածի կամ գտնվի ակոհողի, թմրադեղերի, դեպրեսսանտների, ստիմուլանտների, հալուցիկազենների, մարիխուանայի կամ ուղեղի վրա ազդող այլ թմրանյութերի ազդեցության տակ, երբ ներկայանում է աշխատանքի կազմակերպության տարածք և կազմակերպությանը պատկանող որևէ մեքենա շահագործելու ընթացքում:
- Աշխատանքն հիմնված է լինելու արդար վերաբերմունքի սկզբունքների վրա՝ առանց խտրականության: Արգելված է խտրականությունը՝ էլնելով ռասայից, կրոնից, սեռից, ազգությունից, տարիքից, հաշմանդամությունից, Մարդու իրավունքների վերաբերյալ Միավորված Ազգերի հռչակագրերով, ինչպես նաև կազմակերպության անձնակազմի գործունեության տարածքի օրենսգրքի բոլոր կիրառելի օրենքներով և կանոնակարգերով պաշտպանված ցանկացած այլ դասակարգումից:
- Կազմակերպությունը ճնշումներ չի հանդուրժի
- Կազմակերպությունն աշխատանքի վայրում բռնություն չի հանդուրժի

Այս հանձնառությունները կանոնավոր կերպով գնահատվելու են համապատասխանության թեստավորման միջոցով, որը ներառելու է աշխատողների և կապալառուների համար ակոնիտի և թմրանյութերի օգտագործումը գնահատելու թեստեր: Օրինախախտների մասին գաղտնի տեղեկատուի միջոցով աշխատողները հնարավորություն կունենան տեղեկացնել իրենց կողմից նկատված խախտումները: Աշխատողների վարքագծի վրա ազդելու միջոցով, աշխատողները կարող են դրական դերի մոդել ներկայացնել համայնքի անդամների համար՝ արդյունավետորեն կանխելով սոցիալական խնդիրները:

Որպես համայնքի ներդրումային փաթեթի մաս, Լիդիանը կշարունակի հարակից համայնքներում աջակցել սպորտային և մշակութային միջոցառումներին: Այդ աջակցության միջոցով Լիդիանը կխրախուսի առողջ ապրելակերպով ապրող մասնակցողներին:

Վարքագծի կանոնների համաձայն՝ բոլոր աշխատողները և աշխատողներ չհամարվողները պետք է իրենց վարքագիծը համապատասխանեցնեն Հայաստանի օրենքներին: Լիդիանը մշակել է հստակ քաղաքականություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ վերաբերյալ, որը միտված կլինի խտրականության չենթարկել այդ հիվանդությամբ տառապողներին, ինչպես նաև այդ հիվանդության տարածման, սեռական ճանապարհով տարածվող այլ վարակների տարածման մասին պարզ և ճշգրիտ տեղեկատվություն ապահովել: Այս ազդեցության վերլուծությանն անդրադարձ է կատարվել Բաժին 6.18- ում:

Մեղմացուցիչ միջոցառումները կներառեն՝

- Աջակցել կրթական և հաղորդակցման տեղեկատվական տեղական արշավների իրականացմանը՝ իրազեկելու ՄԻԱՎ-ի և սեռավարակների մասին, որոնք կնպաստեն մարդկանց վարքագծի փոփոխմանը;
- Բաշխել պահպանակներ և տեղեկատվական նյութեր տեղի ռեստորաններում և ժամանցի վայրերում:
- Աջակցել կանանց իրավունքները հզորացմանը և կրթական ծրագրերին՝ կանխելու նրանց ներգրավվածությունը սեռական տարբեր բնույթի

աշխատանքների մեջ :

Առողջ ապրելակերպը կխրախուսվի տեղեկատվական, կրթական և հաղորդակցական արշավների միջոցով Ծրագրի կողմից տեղի համայնքներում: Այդ արշավները կանդրադառնան առնվազն հետևյալ թեմաներին՝ ակոնիոլի գործածում, առողջ սնունդ, հակամարտության և մշակութային իրազեկում:

Կրճատելով աշխատակիցների և զբոսաշրջիկների ու այլ բնակիչների միջև շփումները՝ Ջերմուկում կնվազի սոցիալական կոնֆլիկտների հնարավորությունը: Ծրագրով կփորձվի նվազեցնել հյուրանոցների թիվը (կամ բնակարանների, եթե այդպիսիք օգտագործվեն), ուր կբնակվեն շինարարները՝ կրճատելու շփման մակարդակը: Աշխատողների տեղավորումը Ջերմուկում գնահատվել է և սահմանված է Աշխատողների տեղավորման Կառավարման պլանում (Հավելված 8.24):

Համայնքի բողոքարկման մեխանիզմը կլինի միգրացիայի կառավարման հիմնական գործիքը՝ ներհոսքի հետ կապված միգրացիոն միջոցառման նման: Ջերմուկի և բոլոր մյուս բնակավայրերի բնակիչներին կխրախուսեն օգտագործել այդ մեխանիզմը, եթե վերջիններս նկատեն այնպիսի վարքագիծ, որը ցանկալի չէ կամ որը վնասում է իրենց համայնքների տեղական սոցիալական կառուցվածքին:

### ***Սոցիալական խնդիրների մնացորդային ազդեցությունները***

Մինչ մեղմացուցիչ միջոցառումների կիրառումը, սոցիալական խնդիրները համարվում են պոտենցիալ վատ ազդեցություն: Ազդեցության ծավալը մեծ է, քանի որ Ջերմուկ քաղաքի բնութագիրը փոխվում է (ընտանեկան տուրիզմից շինարարների հյուրընկալման տարածք), ՄԻԱՎ-ի և այլ հիվանդությունների տարածման բարձր մակարդակը և հասարակական կարգի խախտումները, ինչպիսիք են հարբեցողության բարձր մակարդակը, կարող են լուրջ բացասական

ազդեցություն ունենալ կյանքի որակի վրա: Այս ազդեցությունների հետևանքները կարող են անհամաչափորեն ազդել կանանց և աղջիկների վրա:

Մեղմացման միջոցառումները միտված են վարքագծի կանոնների բարձր չափանիշներ սահմանել բոլոր աշխատողների և աշխատող չհամարվողների համար և խթանել սոցիալական խնդիրները նվազեցնող վարքագծերը: Մա չի վերացնի բացասական վարքագծի բոլոր դեպքերը, սակայն լրացուցիչ ուժերի ներգրավմամբ Լիդիանը շատ արագ կտեղեկանա չարաշահումների մասին և համապատասխան միջոցառումներ կկիրառի (Աղյուսակ 6.12.3):

<b>Աղյուսակ Error! No text of specified style in document..3. Ազդեցության գնահատում, սոցիալական խնդիրներ</b>						
Ենթակատեգորիա	Ուղղություն	Ծավալ	Տարածություն	Տևողություն	Ազդեցություն (սկզբնական)	Ազդեցություն (հետո)
Սոցիալական խնդիրներ	Բացասական	Միջին	Տեղական	Միջնաժամկետ	Չափավոր (բացասական)	Չափավոր (բացասական)

Աղյուսակ 6.12.4 ամփոփում է Ծրագրի ազդեցությունը ժողովրդագրության վրա:

<b>Աղյուսակ Error! No text of specified style in document..4. Ազդեցության ամփոփում – ժողովրդագրություն</b>						
Ենթակատեգորիա	Ուղղություն	Ծավալ	Տարածություն	Տևողություն	Ազդեցություն	Ազդեցություն

					(սկզբնական)	(հետո)
Ներհոսք և բնակչության տեղաշարժ	Բացասական	Բարձր	Տեղական	Միջնաժամկետ	Էական (բացասական)	Չափավոր (բացասական)
Սոցիալական խնդիրներ	Բացասական	Միջին	Տեղական	Միջնաժամկետ	Չափավոր (բացասական)	Չափավոր (բացասական)

Error! No text of specified style in document..3 **Մոնիտորինգ և աուդիտ**

Ինչպես վերը նշվեց, մի շարք կառավարման պլաններում անդրադարձ կկատարվի մեղմացուցիչ միջոցառումներին, որոնք կապված են նախագծի կողմից ժողովրդագրական ազդեցությունների կարգավորման հետ: Աղյուսակ 6.12.5-ում ներկայացված են մոնիտորինգային ցուցանիշները, որոնք հետագայում կօգտագործվեն և կմշակվեն մեղմացուցիչ միջոցառումների գնահատման համար (Տես նաև Հավելված 8.24):

Աղյուսակ Error! No text of specified style in document..5. Մեղմացման միջոցառումների ամփոփման աղյուսակ			
Բաժին	Մեղմացում	Մոնիտորինգի ցուցանիշ	Կառավարման պլան
6.12.1 Ներհոսք	<p>Մինիմալացման միջոցառումները ներառում են.</p> <p>Ծրագրի հարակից համայնքներում դասընթացների կազմակերպում՝ հմտությունները զարգացնելու համար, և հմտությունների ռեզիստրի ստեղծում, որը կօգտագործվի որպես ամբողջ կադրային հավաքագրման հիմք: Դասընթացները կթիրախավորեն շահագործման պաշտոններին:</p> <p>Ոչ մի կադրային հավաքագրում չի լինի հանքի տարածքում, բոլոր հաստիքները կբաշխվեն ըստ ընթացակարգի</p> <ul style="list-style-type: none"> <li>Աշխատանքի վերցնել ազդեցության տեղական վայրից, որտեղ հմտությունները այն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Տեղական հավաքագրման ընթացակարգը թարմացված է և բացահայտված որպես աշխատանքի ընդունման մաս: Անհրաժեշտ է իրականացնել կապալառուների աուդիտ տեղական հավաքագրման ընթացակարգի հետ համապատասխանությունը սահմանելու համար և կանոնավոր զեկուցում</li> <li>Զբաղվածության վիճակագրությունը թարմացված է, որի մեջ մտնում են:</li> </ul>	<p>Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր (Աղյուսակ 8.6)</p>

	<p>համայնքների շրջանակներում են (կամ կարող են զարգացվել), որոնք պետք է զբաղեցնեն պաշտոնը;</p> <p>Ծրագրի երկու գրասենյակներից մեկը գտնվելու է բեռնատարների արհեստանոցի մոտ, մյուսը՝ ԱԴՎ-ում: Աշխատողների հավաքագրման համար կսահմանվի երկու կետ. մեկը՝ Ամուլսարի Տեղեկատվական կենտրոններում տեղացի բնակիչների համար, մյուսը՝ Երևանում՝ այլ շրջանների բնակիչների համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղական հավաքագրման գործընթաց, և</li> <li>• Տեղական կառավարիչների հետ խորհրդակցությունների վարում՝ վստահ լինելու, որ չկարգավորված ներհոսքի պոտենցիալ անբարենպաստ ազդեցությունները միասնականորեն ճանաչվել են:</li> <li>• Պետք է իրականացվեն բնակչության</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>○ Սեռային վիճակագրություն</li> <li>○ Հիմնական գրանցում (տարածաշրջան և քաղաք)</li> <li>○ Տարիք</li> <li>• Տեղական կառավարիչների հետ կապերի ժամանակացույցը ավարտված է</li> <li>• Գյուղերի անձնագրերի միջոցով բնակչության փոփոխության մոնիթորինգներ:</li> </ul>	
--	---	---	--

	փոփոխության` գյուղապետերի հետ կոորդինացված մոնիթորինգներ:		
6.12.1 Ներհոսք	<p>Պոտենցիալ բացասական ազդեցությունները մեղմացնելու միջոցառումների կառավարման մեջ մտնում են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բացահայտված և արդյունավետորեն կառավարվող դժգոհությունների վերանայման մեխանիզմ` համայնքների դժգոհությունների գրանցման համար, կամ ռեսուրսների վրա որևէ լարվածության մասին կարևոր տեղեկատվության տրամադրում, և</li> <li>• Շարունակական ամենամայա խորհրդակցություն բնակչության հետ կապերի հանձնաժողովի (ԲԿՀ) խմբերի հետ, որը կօգտագործվի որպես ֆորմալ գործընթաց</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ստացված ներքին և արտաքին բողոքների թիվը;</li> <li>• Լուծված ներքին և արտաքին բողոքների թիվը;</li> <li>• Ներքին և արտաքին բողոքների թիվը, որոնք փոխանցվել են դատարան, և</li> <li>• ՀԿՀ-ի հետ փոխազդեցության ժամանակացույցը ավարտված է.</li> </ul>	<p>Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր (Հավելված 8.6 )</p>

	<p>տեղեկատվության ստացման համար ներհոսքի չնախատեսված անուղղակի ազդեցությունների մասին:</p>		
<p>6.12.2 Սոցիալական խնդիրներ</p>	<p>Լիդիանը բոլոր աշխատողներին կապահովի Վարքագծի կանոնների մասին հստակ ցուցումներով և կպահանջի, որպեսզի աշխատողները հետևեն այդ կանոններին (կանոններին չհետևելը կհանգեցնի կարգապահական հետևանքների ) Այս պարտավորությունները կգնահատվեն կանոնավոր կերպով համապատասխան ստուգումների միջոցով, այդ թվում, թմրադեղերի եւ ակոհոլի պատահական ստուգումներ կանցկացվեն աշխատակիցների եւ պայմանագրային աշխատողների շրջանում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Վարքագծի կանոնները ներառվել են աշխատանքի ընդունման գործընթացի մեջ</li> <li>• Մարդկային ռեսուրսների գրառումներ՝ Վարքագծի կանոններին համապատասխանության վերաբերյալ կարգապահական մտահոգությունների մասով:</li> <li>• Աշխատակիցների և կապալառուների համար թմրանյութերի և ակոհոլի պատահական ստուգումներ</li> <li>• Ահազանգման համակարգի զեկույցներ</li> </ul>	<p>Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագիր (Գլուխ 8)</p>

		(գաղտնի և անանուն)	
<p>6.12.2 Սոցիալական խնդիրներ</p>	<p>Ծրագրով կփորձվի նվազեցնել հյուրանոցների թիվը (կամ բնակարանների, եթե այդպիսիք օգտագործվեն), ուր կբնակվեն աշխատակիցները՝ կրճատելու շփման մակարդակը (Տես՝ Հավելված 8.24):</p>	<p>Շինարարներին տեղավորելու համար հյուրանոցների թիվը Աշխատանքի հետ կապված բողոքների ընթացակարգի մասին հաշվետվություններ և միտումների վերլուծություն</p>	<p>Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (Հավելված 8.6)</p>
<p>6.12.2 Սոցիալական խնդիրներ</p>	<p>Լիդիանը մշակել է հստակ քաղաքականություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ վերաբերյալ, որը միտված կլինի խտրականության չենթարկել այդ հիվանդությամբ տառապողներին, ինչպես նաև այդ հիվանդության տարածման, սեռական ճանապարհով տարածվող այլ ինֆեկցիաների տարածման մասին պարզ և ճշգրիտ տեղեկատվության ապահովել:</p> <ul style="list-style-type: none"> <li>Աջակցել կրթական և հաղորդակցման տեղական տեղեկատվական արշավների իրականացմանը՝ իրազեկելու ՄԻԱՎ-ի և սեռավարակների մասին, որոնք կնպաստեն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>ՄԻԱՎ/ՁԻԱՀ քաղաքականությունը ներառված է աշխատանքի ընդունման գործընթացի մեջ</li> <li>ԱՏԿ-ների իրականացված արշավների տարեկան աուդիտ</li> <li>Պահպանակների բաշխման աուդիտ տեղական համայնքներում</li> </ul>	<p>Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագիր և Համայնքի, առողջապահության և անվտանգության ծրագիր (Գլուխ 8 և Հավելված 8.15)</p>

	<p>մարդկանց վարքագծի փոփոխմանը;</p> <ul style="list-style-type: none"> <li>• Տարածել պահպանականներ և տեղեկատվական նյութեր տեղի ռեստորաններում և ժամանցի վայրերում</li> <li>• Աջակցել հզորացնելու կանանց իրավունքները և կրթական ծրագրերը՝ խուսափելու սեռական տարբեր բնույթի աշխատանքների մեջ ներգրավվածությունից</li> </ul>		
<p>6.12.2</p>	<p>Առողջ ապրելակերպը կիրախուսվի տեղեկատվական, կրթական և հաղորդակցական արշավների միջոցով Ծրագրի կողմից տեղական համայնքներում: Այդ արշավները կանդրադառնան առնվազն հետևյալ թեմաներին՝ ակոհոլիզործածում, առողջ սնունդ, հակամարտության և մշակութային իրազեկում:</p>	<p>ԱՏԿ-ների իրականացված արշավների աուդիտ</p>	<p>Համայնքի, Առողջության, Անվտանգության և Ապահովության Կառավարման Պլան</p>

<p>6.12.2                  Սոցիալական                  խնդիրներ</p>	<p>Համայնքի բողոքարկման մեխանիզմը կլինի միգրացիայի կառավարման հիմնական գործիքը՝ ներհոսքի հետ կապված միգրացիոն միջոցառումների նման: Ջերմուկի և բոլոր մյուս բնակավայրերի բնակիչներին կխրախուսեն օգտագործել այդ մեխանիզմը, եթե վերջիններս նկատեն այնպիսի վարքագիծ, որը ցանկալի չէ կամ որը վնասում է տեղական սոցիալական կառուցվածքին:</p>	<p>Համայնքի բողոքարկման համակարգի զեկույցները և միտումների վերլուծություն</p>	<p>Շահագրգիռ                  կողմերի                  ներգրավման                  ծրագիր (Հավելված                  8.6)</p>
---	---	---	---

#### **Error! No text of specified style in document..4 Եզրակացություններ**

Ազդեցության գնահատումը մշակվել է ժողովրդագրության վրա շինարարության, շահագործման և հանքի փակման ազդեցությունը գնահատելու համար: Արդյունքներն ամփոփված են ստորև:

- Ազդեցությունները բաժանվում են երկու կատեգորիաների. ներհոսք և սոցիալական խնդիրներ, որոնք երկուսն էլ միջնաժամկետ ազդեցություններ են առաջացնում Ծրագրի շինարարության և շահագործման փուլերում:
- Մինչև մեղմացումը ներհոսքն ունի էական բացասական ազդեցություն և չափավոր բացասական ազդեցություն՝ մեղմացումից հետո: Սոցիալական խնդիրները կունենան չափավոր բացասական ազդեցություն մինչև մեղմացումը և չափավորբացասական ազդեցություն՝ մեղմացումից հետո:
- Ներհոսքի մեղմացման միջոցառումների մեջ մտնում են. նախապատվություն տալ դասընթացներին և կադրերի հավաքագրումն իրականացնել տեղացիներից, շարունակաբար կիրառել բողոքների մեխանիզմը, շարունակական ամենամսյա ԲԿՀ խմբակային հանդիպումների կազմակերպում մարդկանց անհանգստությունների և ներհոսքի հետ կապված որևէ խնդրի մասին կանոնավոր կերպով արձագանքներ ստանալու նպատակով:
- Սոցիալական խնդիրների մեղմացման միջոցառումները ներառում են շինարարների և համայնքի անդամների (նաև զբոսաշրջիկների) միջև շփման մակարդակի նվազեցումը, աշխատողների կամ աշխատողի համար Վարքագծի կանոնների մասին ցուցումներ մշակելը և ստուգումների անցկացում՝ ստանձնած պարտավորությունների վարքականոնի համապատասխան: Գեոթիմը ՄԻԱՎ/ՉԻԱՀ վերաբերյալ քաղաքականություն մշակել է, որը նման աշխատակիցներին խտրականության չենթարկելու մշակույթ կստեղծի և միջոցներ կձեռնարկի նվազեցնելու սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների տարածումը, ներառյալ ՄԻԱՎ-ը: ՇՆՊ-ում ընդգծված բողոքների մեխանիզմը խրախուսում է շահառուներին բարձրաձայնել

անցանկալի կամ հակասոցիալական վարքագծի հետ կապված  
անհանգստությունները: